ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/41 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **07 փետրվարի 2023թ.**

2023թ-ի փետրվարի 7-ին ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/41 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝ Հիմնադրամի տնօրենի տեղակալ՝ տնտեսական գծով,

Ս. Բեյբության՝ Հիմնադրամի պահեստապետ,

Ա. Բաղրամյան՝ Հիմնադրամի գլխավոր հաշվապահի ժ/պ

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Եսայանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Անվավեր ճանաչել ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/41 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հունվարի 27-ի 2-րդ որոշմամբ Իքս-Արթ ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

1. ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼ ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/41 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի 2-ՐԴ ՈՐՈՇՄԱՄԲ ԻՔՍ-ԱՐԹ ՍՊԸ-ԻՆ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և հանձնաժողովի անդամները արձանագրեցին, որ 2022թ.-ի դեկտեմբերի 30-ին հայտարարված «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի (այսուհետ՝

Հիմնադրամ) կարիքների համար սերվերի ձեռքբերման ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-22/41 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում գնահատման մեջ ներառված մասնակցի՝ Իքս-Արթ ՍՊԸ-ի, հայտով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը բավարար է գնահատվելը վրիպակի արդյունքում: Շփոթմունքի և տեխնիկական վրիպակի արդյունքում պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի և գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել և քննարկվել է ոչ թե առաջարկվող, այլ հրավերում առկա նկարագիրը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ անհրաժեշտություն է առաջացել իրականցնել վերագնահատում, քանզի Իքս-Արթ ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են հրավերով սահմանված բնութագրի նկատմամբ մի շարք անհամապատասխանություններ, որոնք ներկայացված են ստորև.

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր	**Առաջարկվող տեխնիկական բնութագիր**	**Անհամապատասխանություն**
4U GPU Server	CloudDC 1U Server	և՛ այլ դասի սերվեր է առաջարկված, և՛ այլ ձևաչափի
8x NVMe/SATA/SAS	4x 3.5" SATA	8 սկավառակի տեղ ունենալու փոխարեն առաջարկվախ է 4 սկավառակի տեղ
Dual 10-Gigabit Ethernet	Dual-Port I GbE RJ45	10- Gigabit արագության փոխարեն առաջարկված է 1 Gigabit
2200W (1+1) սնուցման սարքեր	Առաջարկված SYS-610C-TR մոդելն ունի 800W860W 1U redundant սնուցման սարքեր	2200W հզորությամբ սնուցման սարքերի փոխարեն առաջարկված են 800W860W հզորությամբ
Պրոցեսոր 2 x Intel@ Xeon@ Gold 6330 Processor 28-Core 2.0GHz 42MB Cache (205W)	Intel (ICX 6330 2P 2BC/56T 2.0G 42M11.2cT 20sW 4189 D2)	2 պրոցեսորի փոխարեն առաջարկված է 1 պրոցեսոր
Controller Card Broadcom HBA 9500-8i SAS3/SATA 8-Port Tri-Mode Host Bus Adapter - PCIe 4.0 x8	-	Պահանջվող HBA ադապտերը առաջարկված չէ: Առաջարկված SYS-610C-TR մոդելն ունի միայն ob-board SATA3 (6Gbps); RAID 0/1/5/10 support
Cables 2 x Included Cl3 to C14 Power Cable-1EC60320-4Feet	-	Պահանջվող տիպի մալուխներ առկա չեն

Հաշվի առնելով, որ գնման ընթացակարգի բնականոն ընթացքը վերականգնելու համար անհրաժեշտ է էլեկտրոնային աճուրդների իրականացման համակարգի միջոցով իրականացնել վերագնահատումներ.

Հանձնաժողովը որոշեց.

1. Նիստը կասեցնել և համակարգի միջոցով վերագնահատումներ իրականացնելու հնարավություն ստանալու նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն.

2. Լիազորված մարմին կողմից խնդրի կարգավորումից հետո մասնակցին առաջարկել սահմանված կարգով իրականացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝
Լ. Ավետիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Բեյբության _____

Ա. Բաղրամյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Եսայան _____